ՆՈՐ ԳՐՔԵՐ

(ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն)

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ»,
1970 թ., տպաքանակը՝ 1500, 654 էջ:

Վ. Ի. Լենինը ստեղծեց սոցիալիզմի էկոնոմիկայի զարգացման ծավալուն ուսմունք, որի մեջ առաջնակարգ նշանակություն ունի սոցիալիստական վերարտադրության տեսական պրոբլեմների լուծումը: Այդ պրոբլեմներն են լուսաբանվում ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի հրատարակած ներկա ժողովածուում, որը նվիրված է մեծ առաջնորդի հոբելյանական տարելիցին:

Ժողովածուում ժողովրդական տնտեսության զարգացման արդի պրոբլեմների վերլուծությունը կատարվում է ընդլայնված վերարտադրության լենինյան տեսության ու կոմունիստական շինարարության գործնական խնդիրների համատեղ լուսաբանության միջոցով: Ցույց է տրվում Վ. Ի. Լենինի գիտական ժառանգության դերն ու նշանակությունը սոցիալիստական ընդլայնված վերարտադրության հարցերը տեսականորեն ու գործնականորեն լուծելու բնագավառում: Գիրքը կազմված է 17 գլուխներից, որոնք հիմնականում գրել են Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի գիտական աշխատողները:

Ժողովածուի խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը:

«Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ», *1969 թ., տպաքանակը՝ 2000, 276 էջ:*

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի հրատարակած այս ժողովածուն նվիրված է Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին:

Ժողովածուում քննության են առնվում՝ լենինյան դրույթները Արևելքի նշանակության, ազգային-ազատագրական պայքարի էտապների և օրինաչափությունների մասին: Ժամանակակից իրադարձությունների հիման վրա ցույց է տրվում այդ օրինաչափությունների իրականացումը արդի շրջանում և Վ. Ի. Լենինի ու լենինիզմի գաղափարների ազդեցությունն արաբ ժողովուրդների ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական շարժումների վրա, բացահայտվում է Հոկտեմբերյան հեղափոխության և ետհոկտեմբերյան առաջին տարիներին ազգային ինքնուրույնության համար քուրդ ժողովրդի մղած պայքարի պատմությունը: Ժողովածուում լուսաբանվում են նաև իրանական պատմագրությունում մեջ արտացոլված հուժկու քաղաքական շարժումները Իրանում՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, երիտասարդ թուրքերի շարժման վերաբերյալ լենինյան գնահատականների լույսի տակ տրվում են նյութեր՝ այդ շարժման էության և պատմական նշանակության մասին:

Ժողովածուն խմբագրել է արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Գ. Ինճիկյանը:

Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ — «ԼԵՆԻՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՍՍՀՄ-ում», *1970 թ., տպաքանակը՝ 3000, 364 էջ:*

Պրոֆեսոր Ա. Ն. Մնացականյանի այս աշխատությունը լույս է տեսել ռուսերեն լեզվով: Հեղինակը արխիվային և փաստական հարուստ նյութերով, որոնց մի զգալի մասը առաջին անգամ են օգտագործվում գիտական գրականության մեջ, ցույց է տալիս լենինյան ազգային քաղաքականության առանձնահատկություններն ու յուրահատկությունները:

Գրքի առանձին գլուխներում լուսաբանված են Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման պատմությունը, ազգային քաղաքականությունը միութենական հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների գործունեության մեջ: Մեծ տեղ է հատկացված Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարության՝ ազգային հարցին վերաբերող առաջին ակտերին: Նոր փաստաթղթերի հիման վրա վերլուծվում են կուսակցության քաղաքականությունը հայկական հարցում, Վ. Ի. Լենինի հոգատարությունը հայ ժողովրդի ազատագրման նկատմամբ: Հայաստանի ինքնորոշման հարցի նախապատրաստման հանձնաժողովի նյութերը ցույց են տալիս, որ Ժողկոմսովետի նիստերում այդ հարցը 1917 թ. դեկտեմբերին քննարկվել է երեք անգամ: Վ. Ի. Լենինն իր ելույթներում առաջ է քաշել Հայաստանի ինքնորոշման, Հայկական Սովետական Հանրապետության ստեղծման, նրա իրավասությունն ամբողջ Հայաստանի վրա տարածելու խնդիրները:

Աշխատության եզրափակիչ գլուխը պատմում է ՍՍՀՄ ժողովուրդների վերածնման, սոցիալիստական ազգերի առաջացման և նրանց բարոյաքաղաքական դեմքի մասին:

Գիրքը խմբագրել են ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մաքսիմ Կիմը և պատմական գիտությունների դոկտոր Կ. Խուդավերդյանը:

Ա. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ — «Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ», «*Հայաստան» հրատարակչություն, 1970 թ., տպաքանակը՝ 3000, 85 էջ:*

Ռուսերեն լեզվով լույս տեսած այս բրոշյուրում Վ. Ի. Լենինի ուսմունքի ոգով լուսաբանված են տեխնիկական առաջադիմության հիմնական հարցերը: Հեղինակը ցույց է տալիս Լենինի գիտական ներդրման հսկայական նշանակությունը գիտատեխնիկական առաջադիմության՝ որպես ընդլայնված սոցիալիստական վերարտադրության հիմքի պրոբլեմների մշակման ասպարեզում: Փաստական հարուստ նյութերի ընդհանրացմամբ մանրամասնորեն քննարկվում են գիտատեխնիկական առաջադիմության ուղղությունները, գիտությունը անմիջական արտադրական ուժի վերածվելու ընթացքը:

Աշխատությունում տրված է նաև գիտատեխնիկական առաջընթացի սոցիալական բնույթի վերլուծությունը: